Mikro Kapital

Հաստատված է «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ
Տնօրենների Խորհրդի Թիվ 37/22 որոշմամբ
Ուժի մեջ է 26.09.2022թ. – ից

**«ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ**

| **Վարկի արժույթ** | **ՀՀ դրամ** | **ԱՄՆ դոլար** | **ՀՀ դրամ** | **ԱՄՆ դոլար** |
|---|---|---|---|---|
| **Վարկի գումար** | **1,000,000 – 5,000,000** | **2,500 – 12,000** | **5,000,001 – 20,000,000** | **12,001 – 45,000** |
| Տարեկան անվանական տոկոսադրույք | 15% - 17% | 11% - 13% | 15% - 16% | 10% - 12% |
| Տարեկան փաստացի տոկոսադրույք | 29.1% - 33.2% | 24.1% - 28.1% | 25.1% - 33.7% | 19.5% - 28.7% |
| Սպասարկման ամենամսյա վճար | 0.9% - 1.0% վարկի մնացորդի վրա | | 0.7% - 0.75% վարկի մնացորդի վրա<br>0.45% - 0.5% պայմանագրի գումարից | |
| Վարկի ժամկետ (ամիս) | 12 - 60 | | 12 - 84 | |
| Տրամադրման միանվագ միջնորդավճար | 0% | | 1.5% | |
| Վաղաժամկետ մարում | 0% | | 1.5% վաղաժամկետ մարված մայր գումարից | |
| Արտոնյալ ժամկետ՝ մայր գումարի համար | առավելագույնը 6 ամիս | | առավելագույնը 12 ամիս | |
| Ապահովվածություն (նվազագույն)* | ➢ Գրավային արժեքի մինչև 100% - ի չափով, առանց երաշխավորության, կամ<br>➢ Գրավային արժեքի մինչև 250% - ի չափով և 1 – 3 երաշխավոր | | | |
| Տույժեր | ժամկետանց տոկոսագումարի և մայր գումարի նկատմամբ օրական 0.1% | | | |

Mikro Kapital

| Վարկի արժույթ | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| **Վարկի գումար** | **20,000,001 – 75,000,000** | **45,001 – 175,000** |
| Տարեկան անվանական տոկոսադրույք | 15% - 16% | 9% - 11% |
| Տարեկան փաստացի տոկոսադրույք | 23.8% - 33.7% | 17.1% - 27.5% |
| Սպասարկման ամենամսյա վճար | 0.65% - 0.75%<br>վարկի մնացորդի վրա | |
| | 0.4% - 0.5%<br>պայմանագրի գումարից | |
| Վարկի ժամկետ (ամիս) | 12 - 84 | |
| Տրամադրման միանվագ միջնորդավճար | 1.5%<br>առավելագույնը 450,000 ՀՀ դրամ | |
| Վաղաժամկետ մարում | 1.5%<br>վաղաժամկետ մարված մայր գումարից | |
| Արտոնյալ ժամկետ՝ մայր գումարի համար | առավելագույնը 12 ամիս | |
| Ապահովվածություն (նվազագույն)* | ➢ Գրավային արժեքի մինչև 100% - ի չափով, առանց երաշխավորության, կամ<br>➢ Գրավային արժեքի մինչև 100% - ի չափով + առավելագույնը 10 մլն. ՀՀ դրամ (համարժեք 25,000 ԱՄՆ դոլար), երաշխավորությամբ | |
| Տույժեր | ժամկետանց տոկոսագումարի և մայր գումարի նկատմամբ օրական 0.1% | |

## ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:**

Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը կախված է վարկի պայմաններից (գումար, ժամկետ, վարկի մարմանն ուղղված վճարների գումար և մարումների քանակ)

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

**A** վարկի գումարը (վարկատուի կողմից վարկառուին տրամադրված վարկի սկզբնական գումարը)

**n** վարկի մարմանն ուղղված վճարի թիվը N վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

**Kn** վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

**Dn** վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

**i** տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ

## ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿ

| | |
|---|---|
| Վարկի գումար | 5,000,000 ՀՀ դրամ |
| Անվանական տարեկան տոկոսադրույք | 17% |
| Վարկի ժամկետ | 48 ամիս |
| Վարկի տրամադրման միանվագ վճար | 0% |
| Սպասարկման ամենամսյա վճար | 0.9% վարկի մնացորդի վրա |
| Մարումներ | անուիտետային |
| Վարկի տրամադրման օր | 03 հոկտեմբեր 2022թ. |
| Առաջին մարման օր | 03 նոյեմբեր 2022թ. |

**Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 31.6%**

Mikro Kapital

## «ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

| N | ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ |
|---|---|---|
| 1 | Վարկառուի նկարագիր | ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր, որոնք ունեն եկամուտներ ձեռնարկատիրական (բիզնես) գործունեությունից |
| 2 | Վարկառուին/երաշխավորին ներկայացվող պահանջներ | ✓ Վարկառուի տարիքը 21 – 65 տարեկան՝ վարկային պայմանագրի ժամկետի ավարտի պահին, ընդ որում 21 – 27 տարեկան արական սեռի վարկառուների համար պարտադիր պայման է հանդիսանում զինվորական գրքույկի առկայությունը, որը կհավաստի զինվորական ծառայության ավարտը (հակառակ դեպքում՝ ֆինանսական երաշխավորի կամ ընտանիքի անդամի երաշխավորության առկայություն),<br>✓ «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ վճարունակության գնահատման ներքին չափանիշներին համապատասխանող վարկառուի ձեռնարկատիրական (բիզնես) գործունեության առկայություն՝ առնվազն 6 ամիս,<br>✓ Վարկառուի և երաշխավորների դրական վարկային պատմություն՝ «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ–ի ներքին չափանիշներին համապատասխան,<br>✓ Ֆինանսական երաշխավորներ կարող են համարվել ֆիզիկական/իրավաբանական անձիք, ովքեր ունեն փաստաթղթերեն հիմնավորված կայուն եկամուտ կամ անշարժ գույք, որը համարժեք է վարկի գումարին,<br>✓ Վարկառուի և երաշխավորների համապատասխանություն «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ - ի վարկային քաղաքականությանը և ներքին կանոնակարգերով սահմանված այլ չափանիշներին: |
| 3 | Վարկի նպատակ | ✓ Շրջանառու միջոցների ձեռքբերում,<br>✓ Հիմնական միջոցներ ձեռքբերում,<br>✓ Գործառնական ծախսերի կատարում,<br>✓ Ձեռնարկատիրական (բիզնես) գործունեության հետ կապված այլ նպատակներ |
| 4 | Վարկի արժույթ | ✓ ՀՀ դրամ,<br>✓ ԱՄՆ դոլար |
| 5 | Վարկի տրամադրման նվազագույն և առավելագույն սահմանաչափեր | ✓ 1,000,000 – 75,000,000 ՀՀ դրամ<br>✓ 2,500 – 175,000 ԱՄՆ դոլար |

| | | |
|---|---|---|
| 6 | Վարկի նվազագույն և առավելագույն ժամկետներ | ✓ 12 – 42 ամիս՝ շրջանառու միջոցների ձեռքբերման համար,<br>✓ 12 – 84 ամիս՝ հիմնական միջոցների և այլ ձեռնարկատիրական (բիզնես) նպատակների համար |
| 7 | Մարման ժամանակացույց | ✓ Անուիտետային վճարումներ – հավասարաչափ վճարումներ, որի դեպքում վարկի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում յուրաքանչյուր ամիս հաճախորդը կատարում է միևնույն չափի վճարումներ,<br>✓ Հավասարաչափ վճարումներ – հաճախորդը վճարում է յուրաքանչյուր ամիս հավասարաչափ մայր գումար, որի արդյունքում տոկոսավճարների հանրագումարը ամեն ամիս նվազում է,<br>✓ Ճկուն մարման ժամանակացույց – վարկի մայր գումարի մարումները բաշխվում են մարման ժամանակաշրջանի վրա անհավասարաչափ |
| 8 | Արտոնյալ ժամկետ մայր գումարի համար | առավելագույնը 12 ամիս, ընդ որում, վարկի ժամկետի ընթացքում վարկի մայր գումարի ամսական մարմանն ուղղվող մարումների թիվը պետք է լինի 6 - ից ոչ պակաս |
| 9 | Վարկի տրամադրման եղանակ | Անկանխիկ |
| 10 | Վաղաժամկետ մարում | ✓ Վարկառուն իրավունք ունի վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի մարելու վարկը և պայմանագրով սահմանված պարտավորությունները,<br>✓ Վարկի վաղաժամկետ ամբողջական մարման պարագայում վարկառուն վճարում է վճարման օրվա դրությամբ հաշվարկված վարկի սպասարկման և այլ վճարները, տոկոսները և վարկի մայր գումարը,<br>✓ Վարկի վաղաժամկետ մասնակի մարման պարագայում գումարը ուղղվում է վարկի մայր գումարի մարմանը և համամասնորեն նվազեցվում են վարկի հետագա ամսվա (ամիսների) մարման ենթակա տոկոսագումարները, եթե հաճախորդը չի տրամադրել այլ հանձնարարական: |
| 11 | Զուգահեռ վարկեր վարկառուների խմբին/փոխկապակցված անձանց տվյալ վարկատեսակի շրջանակներում | ✓ Զուգահեռ վարկերի առավելագույն քանակ՝ 4<br>✓ Զուգահեռ վարկերի առավելագույն գումարը – 75,000,000 ՀՀ դրամ կամ 175,000 ԱՄՆ դոլար |
| 12 | Տրանշեր | Համաձայն Վարկային Կոմիտեի որոշման |

| | | |
|---|---|---|
| 13 | Ապահովվածություն, վարկ/գրավ հարաբերակցություն (նվազագույն) | ✓ 3 – րդ անձանց երաշխավորություն,<br>✓ գրավային ապահովում համաձայն «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ Վարկավորման ընթացակարգի (անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, ապրանքա - նյութական պաշարներ, սարքավորումներ կամ այլ շարժական գույք)<br>* հաճախորդի ձեռնարկատիրական (բիզնես) գործունեությունում առկա այլ անձանց մասնակցության (փայատիրության) առկայության դեպքում անկախ վարկի գումարի չափից, տվյալ մասնակցի երաշխավորությունը հանդիսանում է վարկի ապահովման պարտադիր պայման |
| 14 | Վճարունակության գնահատում | ✓ հաճախորդի սոցիալական բնութագիր,<br>✓ հաճախորդի վարկային պատմություն,<br>✓ հաճախորդի ֆինանսական վերլուծություն (համաձայն հաստատված ձևանմուշի) |
| 15 | Վարկերի դիտարկում (հաստատում/մերժում) | Համաձայն «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ Վարկավորման ընթացակարգով սահմանված որոշումների կայացման իրավասությունների |
| 16 | Որոշման կայացման ժամկետ | ➢ 1,000,000 – 20,000,000 ՀՀ դրամ (համարժեք 2,500 – 45,000 ԱՄՆ դոլար) 2 աշխատանքային օր (հաճախորդի կողմից տրամադրված ամբողջական փաթեթի առկայության դեպքում),<br>➢ 20,000,001 – 75,000,000 ՀՀ դրամ (համարժեք 45,001 – 175,000 ԱՄՆ դոլար) 7 աշխատանքային օր (հաճախորդի կողմից տրամադրված ամբողջական փաթեթի առկայության դեպքում): |
| 17 | Որոշման մասին տեղեկացնելու ժամկետ | 1 աշխատանքային օր |
| 18 | Վարկը տրամադրելու ժամկետ | 1 աշխատանքային օր գրավի պայմանագիրը պետական գրանցում ստանալուց հետո |
| 19 | Վարկի ձևակերպման վայրը | «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ գրասենյակներում |
| 20 | Վարկային հայտի մերժման հնարավոր պատճառներ | ✓ սահմանված նվազագույն պահանջներին չբավարարման դեպքում (1 – 3 կետեր)<br>✓ հաճախորդի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի և այլ հիմնավորումների չներկայացման, կեղծ փաստաթղթերի կամ տեղեկատվության ներկայացման դեպքում |

Mikro Kapital

| | | |
|---|---|---|
| | | ✓ վարկային կոմիտեն չի բավարարել վարկային հայտը՝ հաշվի առնելով գործարքի ռիսկայնությունը կամ առկա այլ ռիսկերը, վարկային կոմիտեի իրավասությամբ սահմանված այլ դեպքերում, այդ թվում.<br>- դրական վարկային պատմության բացակայություն,<br>- իրավական ռիսկերի առկայություն,<br>- «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից չֆինանսավորվող ոլորտների ցանկին համապատասխանություն,<br>- ֆինանսական ցուցանիշների անբավարարություն |
| 21 | Մոնիթորինգ | Համաձայն «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ Վարկավորման ընթացակարգի |
| 22 | Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ | ✓ Հաճախորդի (առկայության դեպքում կազմակերպության հիմնադիրների, կոլեգիալ կամ միանձնյա գործադիր մարմնի ( տնօրենի, գլխավոր տնօրենի, գործադիր տնօրենի և այլն), բաժնետերերի, երաշխավորների և գրավատուների) անձնագիր և սոցիալական քարտ կամ նույնականացման քարտ,<br>✓ Պետական գրանցման, ներդիր կամ հաշվառման վկայական,<br>✓ ՀՎՀՀ,<br>✓ Կանոնադրություն (իրավաբանական անձանց դեպքում),<br>✓ Լիազորված մարմնի որոշում վարկի համար դիմելու վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում),<br>✓ Գրավադրվող գույքի սեփականության վկայական,<br>✓ Գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք,<br>✓ Այլ փաստաթղթեր (Վարկային Կոմիտեի պահանջով) |
| 23 | Տարեկան տոկոսադրույք և վարկատեսակի այլ պայմաններ | Վարկատեսակի տոկոսադրույքը, տրամադրման վճարը և այլ պայմանները սահմանվում են «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ լիազոր մարմնի որոշմամբ հաստատված վարկատեսակների պայմանների և սակագների մեջ, որի մասին հաճախորդները ծանուցվում են կազմակերպության բոլոր տարածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև պայմանները նկարագրող ինֆորմացիոն թերթիկների և կազմակերպության ինտերնետային կայքի միջոցով |
| 24 | Գրավի գնահատում | Կատարվում է «Միկրո Կապիտալ Հայաստան» ՈՒՎԿ ՓԲԸ - ի կողմից՝ անվճար |
| 25 | Գրավի ապահովագրություն | պարտադիր չի |

Mikro Kapital

| | | |
|---|---|---|
| 26 | Այլ վճարներ | ✓ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրվող սահմանափակումների և գրավի գրանցման համար սահմանված վճարներ.<br>• սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք – 10,000 ՀՀ դրամ<br>• գրավի իրավունքի գրանցում – 26,000 – 27,000 ՀՀ դրամ<br>✓ Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի նոտարական վավերացման վճար – սկսած 15,000 ՀՀ դրամից (նոտարական վավերացման համար ծառայության վճարները սահմանվում են նոտարական գրասենյամների կողմից),<br>✓ ՀՀ ՃՈ կողմից տրամադրվող գրավի գրանցման համար սահմանված վճարներ – 2,000 ՀՀ դրամ: |
| ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ | | ❖ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ»՝ WWW.FININFO.AM, «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»,<br><br>❖ «ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»,<br><br>❖ ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՐԱ,<br><br>❖ ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՉԻ ՆԵՐԱՌՎՈՒՄ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵՋ, ՀԵՏԵՎԱԲԱՐ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ՝ ԿԱԽՎԱԾ |

Mikro Kapital

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔ ԷՋՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ,

- ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ԿԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԵՎ «ԱՔՌԱ» ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ,

- «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ»,

- ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ ՆԱԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼ ԳՈՒՅՔՈՎ (ՏՈՒՆ, ԲՆԱԿԱՐԱՆ, ԱՎՏՈՄԵՔԵՆԱ, ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԵՎ ԱՅԼՆ), ԵԹԵ ԱՌԿԱ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՆ ԲԱՎԱՐԱՐ ՉԷ «ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ՈՒՎԿ ՓԲԸ – Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ,

- ՎԱՐԿԱՌՈՒՆ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ԻՐԵՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ԳՈՒՅՔՈՎ (ՏՈՒՆ, ՄԵՔԵՆԱ, ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԿԱՄ ԱՅԼ ԳՈՒՅՔ) ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿՐՈՒՄ «ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ՈՒՎԿ ՓԲԸ – Ի ԱՌՋԵՎ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐԵՆՑ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ,

Mikro Kapital

- ՎԱՐԿԱՌՈՒԻ ԵՎ/ԿԱՄ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ, ԵԹԵ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԻՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ,

- ՄԻՆՉԵՎ 5,000,000 ՀՀ ԴՐԱՄ ԿԱՄ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ,

- ՄԻՆՉԵՎ 5,000,000 ՀՀ ԴՐԱՄ ԿԱՄ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԸ ԱՄԻՍԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵԻՆ, ԵԹԵ ՎԱՐԿԱՌՈՒՆ ՔԱՂՎԱԾՔԻ ՍՏԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿ ՉԻ ԸՆՏՐՈՒՄ: ԱՆԿԱԽ ՆՇՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ ՔԱՂՎԱԾՔԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ՝ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՅՆ ՍՏԱՆԱԼ (ԴԻՄԵԼՈՒ ՊԱՀԻՆ) ՎԱՐԿԱՏՈՒԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ՝ ԱՌՁԵՌՆ:
ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄՆ ԱՆՎՃԱՐ Է,

- ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՐՈՂ Է ՍՊԱՌՈՂԻՑ «ՃԱՆԱՉԻՐ ՔՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ» («KNOW YOUR CUSTOMER») ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՀԱՆՋԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ ՍՊԱՌՈՂԻՆ (ՆՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ),

- ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԱՇԽԱՎՈՐՆ Է ԴՐԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:

| | |
|---|---|
| | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՏՃԵՆԸ:<br>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՊԱՀԱՆՋՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԾԱԳՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ՆՐԱՆ ՎԱՐԿԻ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ) ՄՆԱՑՈՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ:<br>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԳՐԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԱՌՆՎԱԶՆ ԵՐԵՔ ԵՂԱՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ԸՆԴ ՈՐՈՒՄ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌՁԵՌՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ՄԻԱԿ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ):<br>ՎԱՐԿԱՌՈՒԻ՝ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱԿԱՑՈՒՅՑՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԻՑ ԱՌՆՎԱԶՆ 1 ՕՐ ԱՌԱՋ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Է ՄԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ,<br><br>❖ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՆՈՒՑՈՒՄ Է ԱՅԴ ՄԱՍԻՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՆ: |